ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 1117-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Վարդան Պետրոսյան 22.02.2025 00:42:19	Նախագծում սահմանվել է. «Եվրոպական միության երկրներում արտադրված ֆերոմոնների, բույսերի աճի խթանիչների և կենսաբանական ծագման պեստիցիդների պարզեցված ընթացակարգով գրանցման համար գրանցող երկրի, գրանցման տարեթվի, համարի և գրանցող երկրի գործող անվանացանկում պեստիցիդի ընդգրկվածության վերաբերյալ տեղեկատվությունը չի պահանջվում:»: Նախ	Ձեր կողմից ներկայացված առաջարկությունը կքննարկվի և անհրաժեշտության դեպքում նախագիծը կլրամշակվի:	

		ԵՄ երկրներում ֆերոմոնների արտադրությունը շատ քիչ տարածում ունի: ԵՄ երկրներում մեծամասաբ շրջանառվում են այլ երկրների արտադրության ֆերոմոններ: ֆերոմոններ արտադրող առաջատար երկրներից են ԱՄՆ-ն, Անգլիան, Ճապոնիան, Կորեան, Չինաստանը: Աշխարհում ֆերոմոնների գրանցման պահանջը տարածված չէ, ուստի նշված կետով սահմանված սահմանափակումն իրականում կվնասի Հայաստանում բիոպայքար մղող մշակողներին և ֆերմերներին: Միջազգային պրակտիկայում հիմնականում ֆերոմոնների գրանցման պահանջ առկա չէ, իսկ եթե կա, ապա դրանք մեղմ են, քանի որ դրանք անմիջական առնչություն չունեն մշակաբույսերի հետ և վնասակար չեն շրջակա միջավայրի համար, ուստի առաջարկում եմ Հայաստանում ֆերոմոններն ազատել գրանցման պահանջից կամ այլ երկրներում գրանցումը ներկայացնելուց		
2	Վարդան Պետրոսյան 22.02.2025 00:41:58	Նախագծի 7-րդ կետում նշված է. «Լիազոր մարմինը պեստիցիդի գրանցումը մերժում է, եթե՝ (. . . . . .) • պեստիցիդը գրանցված չէ արտադրող երկրում, բացառությամբ սույն կարգի 9-րդ կետով սահմանված դեպքի հիման	Ձեր կողմից ներկայացված առաջարկությունը կքննարկվի և անհրաժեշտության դեպքում նախագիծը կլրամշակվի:	

		վրա գրանցվող պեստիցիդների:»: Գտնում եմ, որ նշված սահմանումը չի կարող լինել անհրաժեշտ և պիտանի, ուստի ենթակա է վերաձևակերպման: Մասնավորապես՝ շատ հաճախ պեստիցիդներն արտադրվում այնպիսի բույսերի համար, որոնք արտադրող երկրներում չեն մշակվում: Այսինքն՝ նման դեպքերում արտադրողն իր երկրում գրանցելու անհրաժեշտություն չունի (գրանցումը շուրջ 1 մլն եվրո ծախս է պահանջում): Օրինակ՝ Գերմանիայում արտադրված պեստիցիդը, որը նախատեսված է այնպիսի մշակաբույսի համար, որը Գերմանիայում չի մշակվում, բայց գրանցված է և մշակվում է Իտալիայում, Իսպանիայում և այլն: Նման պայմաններում տվյալ պեստիցիդի գրանցումը Հայաստանում կմերժվի: Առաջարկում եմ, սահմանել երկրների ցանկ, որոնցում պեստիցիդի գրանցումը վստահելի կհամարվի և հիմք կլինի ՀՀ-ում գրանցելիս:		
3	Վարդան Պետրոսյան 22.02.2025 00:41:34	Իրավական ակտի նախագծում պարբերաբար օգտագործվում են «արտադրված է» և «արտադրող երկիր» հասկացությունները: Գտնում եմ, որ դրանք երկիմաստ են, և կարող է ունենալ հակասական մեկնաբանություններ,	Ձեր կողմից ներկայացված առաջարկությունը կքննարկվի և անհրաժեշտության դեպքում նախագիծը կլրամշակվի:	

		մասնավորապես. 1. Պեստիցիդի արտադրական տարածքի երկիր՝ տարածքը, որտեղ ֆիզիկապես արտադրվում է տվյալ պեստիցիդը: 2. Երկիրը, որտեղ իրավաբանական գրանցում ունի պեստիցիդն արտադրող ընկերությունը: Գտնում եմ, որ «արտադրող երկրում» կարգավորումն անհրաժեշտ է հստակեցնել՝ դա վերաբերում է ֆիզիկական արտադրությանը, թե՝ ընկերության իրավաբանական գրանցմանը:		